ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻՑԻՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԵՒ ԲԱՆՈՑԱԿԱՆ ԳՈՒՍ ՏԻՐԱՊԱՊԵՏԱՆԸ Հ. ՄԱՐ ՄԻՊ ԽԱՐՀՈՒՐԴ։

Երբ շինութեան մը ձեռք կ՚զարնեմք, նախ և առաջ մեծ ուշադրութեամբ ու խնամքով կ՚ջանամք որ հիմը հաստատուն լինի. իսկ տղայոց ծաղիկ հասակը շատ անգամ ծնողաց թուլութեանն ու անհոգութեանը զոհ կ՚լինի. վասն զի անմոռաբար կ՚կարծեն թէ տղայի մը պակասութիւնները ուղղելու համար անպատճառակ ոք է սպասել որ խելահաս լինի։ Այնպիսի մայրեր կ՚մոռանան թէ կրից ծնունդը արդէն իսկ կ՚գուշակէ տղայոց խելքին ամփոփումը, և կ՚թողուն անխոհեմութեամբ որ այն կրքերը ոեպհական դառնան նոցա յապագային։ Ո՞վ չէ տեսած այնպիսի ծնողքներ, որ տղայոց բարի կամ չար պահանջմունքները ըստ հաճոյից իւրեանց կ՚կատարեն։ Իւրաքանչիւրեան առեն տղայոց ամեն տեսակ պահանջմունքները անխտիր կ՚կատարեն, իսկ երբ բարկացած են չնչին բանի մը վերայ, ոչ միայն նոցա կամքը չեն կատարեր, այլ նաև օգտակար բաները չեն յօժարիր տալ իրենց զաւակացը. Այլ գիտէք այն առեն տղայք ինչ կը՚ուզեն. իւրաքանչիւր պահանջմունքին արագար եղածը իմանալով կ՚աշխատին խորամանկութեամբ ծնողական սէրը իրենց գրաւել, որպէս զի յօժարին նոցա փափագը կատարել. ուստի և կամաց կամաց ծնողք տղայոց վերայ ունեցած համարումը կ՚կորսուցը-

ւասիկ աեսէք կարգաւորեալ են առաջի ձեր իբրև պտղալից ծառատունկք հաստատեալ քաղցրակուր պտղովք. քաջալանս տքնութեամբ անխոնջ պսպտիշպանին դարմանեալք, յորոց հատուցանելոց են ձեզ զարդիս զսակաւամանութիւն և առյապա յիւրում ժամանակի զբազմաբեղունն զառատն։ Մի վհատիք զդացինք թէ՝ ուսմամբ և եթ կարէ իւրաքանչիւր ոք հասու լինիլ պատշաճակն ի պատուաւորութեան առ Աստուած և առ ընկերս, առ Ազգ և առ հայրենակիցս իւր. ուսմամբ միայն կարէ մանկիթարել զիշատացեալ սիրտ հայրենեաց իւրոց։ Այսոքիկ են ահուսիկ պտուղ միայն ազգասիրական և ուսումնասիրական ջանից ձերոց մեծարութեարք. առանց գոյծակ ո թեան ձերոյ իշխանութիւնն եկեղեցական չկարէ՝ ի գլուխ հանել զձեռնարկութիւն ինչ։ Վասնորոյ մատուցանեմք արդուն խնամակալին դպրոցիս բարձր սրբազան ազնվագոյն Թեմիս Առաքելական սրբազան եպիսկոպոսի, ձեզ և բարեջան հոգաբարձուացս մերոց՝ ի բոլոր պատեղ ի կատար գոհունակութիւն մեր. երախտապարտ եմք յաւիտեան անբաւ երախտեաց ձերոց, անհագ ծանեալ դրոշմեալ ի չքնաղ առաքինութիւնք ձեր հանդերձ երախտագիտութեամբ՝ ի տախտակ սրտից մերոյ. կեցցէք դուք՝ ի փառս և պարծանս մեր, զի ուսանելով խնամովք ձերովք զմայրենի լեզուն մեր՝ լիցուք պիտանի զաւակք ազգի մերոյ և արժանաւոր որդիք արժանաւոր ծնողաց։

Քպտուղար հոգևոր կառավարութեան
հայոց Գ. Ս. Ղեմիր Լևոն Ծնունդ։

նեն. վասն զի տղայք հետզհետէ կ՚ըմբռնեն կ՚իմանան նոցա բնութեան թոյլ կողմերը։

Մեզնէ ով չէ լսած տղայոց հետեւեալ խոստովանութիւնը թէ՝ "այս ինչ բանը ստնտուին (ծծմօր) չհայտնեմք. վասն զի բարկացած լինելով պատասխան չտար. կամ թէ՝ այս առաւօտ մեր մայրը շատ ուրախ է, կրնամք խօսիլ հետը"։

Ծնողք ՚ի մանկութենէ պարտական են իրենց տղայոց քաղցրութեամբ սովրեցնել հնազանդութիւն. Նա պարտական է այսպէս ասել. "Մինչեւ ակար եմ այսօր կամ բարկացած, նայէ չխօսես և չձանձրացնես զիս անտեղի հարցմունքներով. վասն զի ժամանակ չեմ ունենար պատասխանը տալ"։

Այն ատեն աղջիկ. կ՚հասկնայ մօր սիրոյն ու գթութիւնը և կ՚դադրի խօսելէն. Նա՝ թէպէտ և փոքր՝ բայց խոհեմութեամբ կ՚մտածէ որ մայրը հիւանդ լինելով պէտք չէ զինքը նեղել։

Երբ տան մէջ ուրախութեան անցք կը պատահի՝ ծնողք պարտական են զայն իրենց զաւակաց հաղորդել. նոցա բարի հետաքրքրութիւնը յղնել, զուարճալի ճանապարհորդութիւններէ զինքը չզրկել, բարեկամաց տեսութեան մանկանց ընել. միով բանիւ պէտք է որ ամեն բանի ցաւ և տրտմութիւն, հասարակաց լինի։ Այս կերպով ընտանեկան քաղցր կապերը ամրապնդելով՝ նոքա իրենց զաւակաց սրտին զգացմունքները կ՚ուղղեն դէպ ՚ի բարին և սիրել կուտան ընտանեկան կեանքըն ու նորա յարատեւութիւնը. Ընդհանրապէս մայրերը չեն գիտեր թէ երբ հարկաւոր է խրատ տալ տղայոց. յարմար ժամանակ չեն գիտեր ընտրել. ուստի զարմանք չէ որ շատ անգամ պատճառաբերելով իրենց անմեղ զբաղմունքները անհոգ կ՚լինին յօգուտ գործածել տղայոց այն ժամը, յորում նոքա պատրաստ են սիրով և գովելի հետաքրքրութեամբ ականջ դնել նոցա պատմութեանը. Շատ անգամ կ՚պատահի որ տղայք խաղալէն յոգնած՝ կ՚վազեն կուգան իրենց մօր քովը և ձեռքերնին ծալելով իրենց բոլոր ուշադրութիւնը խօսակցութեան վերայ կ՚դարձնեն և անյագաբար զայն կ՚լսեն. Ահա ամենայարմար միջոց մօր մի համար իւր զաւակին մատղաշ սիրտը զարդարելու նոր, ճշմարիտ և օգտաւէտ խրատներով. վերոյ այսպիսի ատեն իրենց պատմութիւն կամ վէպ մի պատմէ, և մեկնէ թէ՝ այս ինչ բանի պատմութիւն կրնան ճշմարիտ անցք եղած լինի համար. իսկ միւսին վէպ՝ զուարճութեան համար գրուած լին և այլն. Ով չէ լսած մանկութեան ատեն այն պատաւական անալի և ինքնատեղծ պատմութիւնները, զորս ստնտուք ու հասարակ և գրագէտներ գլխաւորապէս տփրութիւն ունին մեծ ախորժակով պատմել տղայոց. երկիւղալի և խաբեբայական առածներով զարդարել, որ տղուն տհաս ուղեղին վերայ զարմանալի ազդեցութիւն ունին, շատ անգամ նոցա խաղաղ քունը խռովայոյզ երազներով և տեսիլքներով կ՚ընդհատեն, և որ մեծն է՝ բոլոր կեանքի մէջ երկչոտ ու պասուղ կընեն.

Վասի քանի խելացի կանոններ, քանի

շահաւէտ գիտութիւններ մայր մի գիտնել չկրնար իւր մանուկ որդւոյ միտքը զարգարելու համար. եթէ իրաւամբ հասկցած է որ այս կերպով գործ տեսնելը իւր զաւակին ապագայ բարեբաղդութեան համար է։ Մայր մի միշտ ունեցած է աւելի ազդեցութիւն իւր զաւակաց վերայ։ Թէպէտ և տղայք իրենց հայրերէն կ'վախնան. բայց շատ անգամ զիրենք չեն սիրեր։ Այլ է, սիրելի ընթերցող, տղային մօր վերայ ունեցած սէրն ու յարգանքը. նորա յոյսը մայրն է, նորա պաշտպանը մայրն է, նորա առաջին դաստիարակը դարձեալ մայրն է։

Այս եղանակաւ նորա կամապաշտութիւնը օրըստօրէ կ'սանձի և անտարբերութեամբ կ'սկսի նայել պատժոյ վերայ։ Կուզէ՞ք յաղթել իրեն, մի ջանաք սիրտը առնել, մխիթարել, զանազան քաղցրեղէններ խոստանալ, ինչ որ նորա մանկական կատաղութեանը առջև. հապա թողէք որ լայ մինչև յոգնի։ Ասկէց աւելի խրատ չկրնար լինել իրեն։ Այս և անօթ այն մօր, որ բարկութեան ատեն մոռնալով որ կեանք շնորհեր է իւր զաւակին՝ վրան ձեռք կ'վերցնէ և զարնելէն յետոյ վայ ձեռքս կոտրուէր, չհասնէի զարնելու և կրողը զիս տանէր և այլ ասոր նման խենթութեան բաներ կ'աւանցէ։ Ի սկզբան մօր բարկութիւնը տղուն վերայ ահու սարսափ կ'ազդէ. բայց կամաց կամաց այն ևս իրեն ականջին ճանճի բզզալ մը կուգայ, և յետոյ ոչ միայն չհնազանդիր նաև խելացի խրատներուն, այլ կ'յանդգնի ինքզինքը արդարացնել կամակորութեամբ, որ առաջին քայլ է դէպ ի ըմբոստ ապստամբութեան ծնողաց կամացը, և հետևաբար կ'սկսի ծանր խօսքերով ընդդիմաբանել նոցա, կամ դուռը ուժգին զարնելով ու հայհոյական խօսք մի ասելով հեռանալ։ Մի՛ մոռնաք ծնողք, գլխաւորապէս մայրեր, որ մանկութենէ յետոյ երիտասարդութիւն կուգայ՝ տղայն հասակը առնելով բարկութիւնն ալ կաճի, և դուք այն ատեն կ'զգանգատիք որ ձեր զաւակաց բարբարոսական վարմունքին զոհ եղած էք։ Կարելի չէ զձեզ արդարացնել. նոքա յանցաւոր չեն, նոքա ձեր սկզբնական անզգոյշ ու ագէտ գործողութեանց արձագանգն ու հետևանքներն են։

Տղայոց մարմինը, զոր ծնողք կ'ծեծեն խելքն ու հոգին կրթելու համար հարուածներու շուտով կ'ընտելանայ, որով հարկաւոր կ'լինի պատիժները անընդհատ շարունակել։ Սովորական հնարն է այժմ մեր ազգին մէջ ծառի բարակ ճիւղն ու անուանի դելարանը (Փալագա)։ Այս տեսակ պատիժները վնասակար ու բարբարոսական լինելէն զատ ամենևին տղային պակասութիւնները չ'կրնար ուղղել. և տարակոյս չկայ որ այն ցածհնարքէն աւելի օգտակար կ'լինէր զինք ամչցընելն ու խոհեմութեամբ յանցանքը երեսը զարնելը։

Այսպիսի պատիժներով տղայոց բարքը ամենևին չուղղուիր, հապա կարճ միջոց մը ազդեցութիւն կ'ընեն. յետոյ չար կրքերը աւելի կ'սաստկանան և ուրիշ խո-

րամնկ հնարքներ հայթայթելու կ՚ջանան, որպէս զի գործուած չարութը ծածկեն պարտըկեն ։ Պէտք չէ ըսել որ այս տեսակ պատիժները տղայոց միտքը կբթացնեն և առաջնորդ կ՚ըլլին դէպի չարը․ վասն զի միթէ ու անամօթ տղան յանդիմանութենէ ազատելու համար ծեծի կ՚սովորի, ու գերիի պէս կսկսի համբերել ։ Նաև աւելի վնասակար է ծաղրաբանել պատժուող մը զայն ընկերներուն առջևը ։ Ծածուկ պատիժը աւելի օգտակար է․ վասն զի տղան ամօթխած կըլնէ ու կ՚զգուշանէ նոր յանցանքէ ։

Մութ տեղ տղայքը փակելու սովորութիւնը անօլ դէշ է, որ տղայք ձանձրալից ու երկչոտ կ՚ըլլին ։ Իսկ քանի մը հոգի խմբովին փակելուն հետևանքը այն է, որ նոցա երևակայութիւնը կբռնկի, և զարմանք չէ եթէ մեղանչեն ընդդէմ բարոյականութեան և կամ թէ վախնալով ուշաթափ լինին ։

Որ մի մանկահասակ աղջիկ մը միայնակ սենեակի մէջ կփակեն, խեղճ աղջիկը իւր քոյրերուն պարտէզի մէջ վազելն ու ցատկռտելը տեսնելով կ՚յուսահատի, և կ՚պատրաստուի ինքզինքը պատուհանէն վար նետել․ բայց բարեբաղդաբար նոյն միջոցին դուռը կ՚բանան ու մօտալուտ մահուանէ զինքը կազատեն ։

Պատմեմ ձեզ երկու սրտաշարժ անցք, որ անիրաւ պատիժ սպառնալուն վնասաբեր հետևանքներն են ։ Տասը տարեկան աղջիկ մի Փարիզ կուգայ ծնողաց հետը երևելի տօնախմբութեան հանդիսին ներկայ գտնուելու համար, և սխալմամբ կ՚առնէ իւր ընկերակիցներուն մէկին ոսկիէ ծոցի ժամացոյցը ։ Շուտով կբռնուի փոքրիկ գողուհին, և ծնողքը կ՚վճռեն որ տօնախմբութեան հանդիսի ատենը իրենց ետևէն գայ ձեռքը տախտակ մի բռնած վրան ,,ժամացուցի գող‘‘ գրուած ։ Այս պատիժը զարմանալի համբերութեամբ կրելէն յետոյ առանց տրտնջելու կամ կաթիլ մի արցունք թափելու ծնողացը հետ հանդիսէն տուն կ՚վերադառնայ ։ Փոքր ինչ յետոյ սրահը կելնէ և աղախնոյ մը հանդիպելով ,,Մնաս բարեաւ, Մարիամ,, կասէ․ ես անպատիւ եղայ‘‘ ։ Այս ասելով կհեռանայ մերձակայ բլուրը և լճակի մը մէջ նետուելով կըխեղդուի ։

Մօր մի համար դժուար չէ զաւակին սրտին մէջ բարի սերմն սերմանել, եթէ այն զաւակասէր փափագը ունի․ բայց չուրանան մայրեր որ աւելի գէշ օրինակներով ըստ մեծի մասին իրենց զաւակաց նորաբողբոջ հասակը կ՚մաշեն, և հետևաբար նոցա թշուառութեան գլխաւոր պատճառը կ՚լլին ։ Մայր մի կարող է ասել ․ "Նայեցէք, այս աղքատ աղջկան վերայ, որ ձեզ պէս քնքուշ է, ձեզ նման արագ կ՚վազվզէ, գեղաշարժ է․ նախշուն թիթեռնիկները կ՚բռնէ ձեզի տալու համար, շատ վարպետ ծաղկանց փունջ կը կապէ․ նորա մայրը զինքը կ՚սիրէ, ինչպէս որ ես ևս զձեզ, ձեզ պէս սիրտ ունի, որ ուրախութեամբ կ՚տրոփէ, երբ մայրը օրական աշխատութենէ կամ շու-

կայէ տուն կ՚ներգաղթեցնայ. ինչպէս որ ես և շատ անգամ կ՚գտնեմ տուն ոչ՝ պնակ տեղերէն, ուր անպատշաճ է ղձեղ հետս տանելու։ Ինչ տարբերութիւն կը տեսնես քու, և այս, աղջիկան մէջ։ Կորսուած հագուստը հատ քթանէ կարուած է, իսկ դու բեհեղ՝ այ շրջազգեստ կ՚հագնի։ Ուրուպատճառը Աստուծոյ անմանրի կարողութիւնն է որ նորա աղքատ ծնողքտուներ է, իսկ ձեզ հարուստ նա կարող է զրկել զմեզ մեր ունեցած կայքէն և տալ զայն այս աղջկայ ծնողացը։ Ասոր պէտք չէ որ գոռոզանաք և անարգէք ձեզնէ աղքատ եղողները։

Տղայք սոլոր են առ հասարակ զանազան հարցմունք առաջարկել իրենց ծնողացը և անհամբերութեամբ պատասխանը սպասել։

Չանացէք ձգդութեամբ գոյ ընել զիրենք և ձեր կողմանէ ևս գիւրըմբռնելի հարցմունքներ ընել, և թողէք որ իրենք աշխատին մտածելու և լուծելու։ Աստուծոյ նոքա լաւ խորհելու և գտնելու կարողութեան տէր կ՚լինին։ Անկանց համար հետաքրքրութիւնը բնական տուրք է։ Մի՝ նեղանաք և մի՝ զայրանաք, ինչպէս որ շատերը այս յատկութիւնը ունին, և ասելով մի՝ արհամարհէք նոցա գիտութեան սէրը։ Ոչ՝ ոչ ոչինչ։ գիւղի մէջ ջաղացք մի կ՚տեսնեն կ՚ուզեն իմանալ նորա էութիւնը։ պէտք է անպատճառ նոցա հասկացնել թէ ինչպէս ան ով մարդուս կենսական անուն կ՚պատրաստուի։ Կ՚տեսնեն մշակներ, պատմեցէք նոցա պարզն ու գործը թէ՝ ինչպէս կ՚սերմանեն ու կ՚հնձեն։ Ինչ տեսակ գործիքներ ու կենդանիներ՝ գործ կ՚դնեն, և թէ ինչ լուրջ բան է աշխատասիրութիւնը։

Աղաղակին մէջ խանութներ կ՚տեսնեն, որոց մէջ մարդիկ կերպ կերպ արհեստներով կ՚զբաղին, զանազան ապրանքներ կ՚ծախեն։ Պատմեցէք իրենց թէ ոչ այնպիսի բաներ են զոր բնութիւնը տուեր է մարդուս, նոցա տուած կրթութիւնը կատարելագործելու համար։

Մի՝ ծուլանաք, մայրեր, պատմելու թէ ինչպէս կ՚մշակուին ու կ՚կատարելագործուին բնութեան պարգևները որոց մէջ մարդս վաճառականութիւն կընէ և մարդկութիւնը իւր ընկերական վիճակը կ՚բարձրէ։

Կամաց կամաց և անզգալի կերպով կ՚տրվին նոքա լաւ ընել իրենց հարկաւոր եղած բաները և գնահատել բանի մը արժողութիւնը, ոչ անտեսական կառավարութեան գլխաւոր հիմն է։ Կ՚տեսնեն ողջայք որահ կամ դաշտի վերայ ծիծեռնակ, մրջիւն կամ մեղու, մի՝ դանդաղիք, մ՚յրեր, հաղորդել ձեր զաւակաց նոցա պաշտօնը, նոցա օգուտը, նոցա կարևորութիւնը մարդուս համար, զոր Աստուած իւր ամենառատ ողորմութեամբ՝ շնորհեր է՝ զարգ բնութեան և յօգուտ մարդոյ։

(Շարունակելի)